Գլխավոր տեղեկություն	
Համար	N 1739-Ա
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Base act (10.12.2019-till now)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	Չի հրապարակվել պաշտոնական պարբերականում
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	05.12.2019
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	09.12.2019
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	10.12.2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 դեկտեմբերի 2019 թվականի N 1739-Ա

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ ու 9-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Որպես նվիրատվություն Հայաստանի Հանրապետությանը՝ ընդունել Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (այսուհետ՝ ՄԱԶԾ) հայաստանյան գրասենյակի օժանդակությամբ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող՝ Եվրոպական միության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, Շվեդիայի Թագավորության և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ֆինանսավորվող «Հայաստանում ընտրական գործընթացների աջակցություն» (ՀԸԳԱ) »00104274 ծրագրի շրջանակներում, 5117040 դրամ արժողությամբ ձեռք բերված սարքավորումները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքն ամրացնել Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը:
3. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո քսանօրյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նվիրատվության պայմանագրի կնքումը և հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ դրանց հետ կապված ծախսերն իրականացնելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության միջոցների հաշվին:

Հայաստանի Հանրապետության վարչապետ **Ն. Փաշինյան**

2019 թ. դեկտեմբերի 9
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2019 թվականի
դեկտեմբերի 5-ի N 1739-Ա որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ

NN ը/կ	Տեխնիկական սարքավորման անվանումը	Քանակը	Նույնականացման համարը	Ձեռքբերման արժեքը (դրամ)
1.	Server Lenovo ThinkSystiem SR250 E-2124 16GBx2	1	7Y51S1GV00S4AYN35	1520000
2.	WinSvrSTDCore 2019 SNGL OLP 16Lic NL CoreLic+5x WinSvr DvcCAL	1	9EM-00652 R18-05767	607000
3.	Rack Cabinet ITK 19", 24U with PDU 8 socket	1	LN35-YYX68-X	202000
4.	Switch D-Link DGS-1210 26/F	1	S3DQ1I9002192	88000
5.	UPS APC SUA 5000RMI5U	1	AS1918152342	1700000
6.	Visual Sudio Pro 2019 SNGL OLP NL	1	C5E-01380	267000
7.	WDBFBE0120JBK-EESN WESTERN DIGITAL External HDD, My Book Duo 12TB, USB 3.0	2	WUBS28390628 WUBS28390580	733040

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար **Է. Աղաջանյան**